

ք.Երևան

«25» «օգոստոսի» 2021թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Գ.Գուլյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պետական մարմին», մի կողմից, և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրենի ժ/պ Խ.Մարտիրոսյանի, ով գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կազմակերպություն», մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով Կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1370-Ն որոշումը, ինչպես նաև կողմերի միջև 2021 թվականի փետրվարի 1-ին կնքված «ՇՄՆ-ԴՇ-21/01» ծածկագրով պայմանագրի 8.2 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

- 1.1. Կողմերը որոշեցին 2021 թվականի փետրվարի 1-ին կնքված «ՇՄՆ-ԴՇ-21/01» ծածկագրով պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունը՝
1.1.1. Պայմանագրի 1.1 կետում «45 461 800 (քառասունհինգ միլիոն չորս հարյուր վաթսունմեկ հազար ութ հարյուր)» բառերը փոխարինել «48 868 000 (քառասունութ միլիոն ութ հարյուր վաթսունութ հազար)» բառերով,
1.1.2. Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված N°1-ի «Միջոցառումներ» աղյուսակում՝ 1-ին կետի «պահանջվող գումարը (դրամ)» սյունյակում և «Ընդամենը» տողում «45 461 800» թիվը փոխարինել «48 868 000» թվով:
1.1.3. Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված N°2-ի «ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագիր» աղյուսակում «Միջոցառման վրա կատարվող ծախսը (հազար դրամ)» տողի՝
ա) «Ինն ամիս» սյունյակի «30,459.40» թիվը փոխարինել «33,865.60» թվով,
բ) «Տարի» սյունյակի «45,461.80» թիվը փոխարինել «48,868.00» թվով:

2. Այլ պայմաններ

- 2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:
2.2. Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
Շրջակա միջավայրի նախարարություն
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք
ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011000875
ՀՎՀՀ 02507198

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ
ք.Երևան, Փ.Բյուզանդի 1/3
ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900018002866
ՀՎՀՀ 02543163

Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժ/պ

Գ.Գուլյան

Խ.Մարտիրոսյան

Ստորագրություն
Կ.Տ.

Ստորագրություն
Կ.Տ.



Handwritten signatures of the officials mentioned in the document.